

ճարձատեր եւ կանթեղներու լոյսը կը զօրացներ: Այդ աշնան ժամանակին գիշերները բաւականին զգալի եւ ցուրտ են Հայաստանի այս կողմերը, եւ Թեոդորոս ախորժ աչօք նայեցաւ այդ բոցոյն եւ մօտեցաւ վայրկեան մը վառարանին:

Իսկ երբ Հայոց զօրավարը թողուց վառարանը եւ դարձաւ՝ Սուրեն ու Գրիգոր անհետացած էին. իւր թիկնապահաց ակնարկ մը ձգեց, եւ ահա մէկը յառաջացաւ՝ սաղաւարտն առաւ գլխէն, եւ իւր նշանաւոր գլուխը երեւցաւ: Թեոդորոս Ռշտունեաց Տէրը միջահասակ եւ հազիւ թէ յիսուն տարու մարդ մը կ'երեւար այն ատեն. իւր լայն ճակատը, իւր յօնքերու զօրեղ կամարը, իւր ծանր եւ անխռով նայուածքը, իւր արծուի քիթը, իւր լայն կուրծքը, իւր բոլոր կերպարանաց հզօր համեմատութիւնը, աւելցնենք ասոնց վրայ իւր հակիրճ եւ վճռական խօսակցութիւնը՝ առաջին ակնարկին յայտնի կ'ընէին նշանաւոր մարդը, որ հրամայելու համար ստեղծուած էր:

Նոքա, որ կը ճանչէին զինքը, գիտէին իւր արդարութեան ոգին, գիտէին իւր քաջասրտութիւնը, գիտէին իւր անդրդուելի հաստատամտութիւնը, իւր հայրենի կրօնից հաւատարմութիւնը, եւ որ հազուագիւտն էր՝ մեծ եւ պզտիկ նախարարաց մէջ՝ գիտէին ժողովչրդեան վրայ անագատ եւ շինական ժողովրդեան վրայ իւր ունեցած գուրջը, որ միայն ճշմարիտ հայրենասիրութիւն կրնայ համարուիլ: Շատ անգամ, երբ բարձակից նախարարաց հետ կը խօսէր, կը յիշեցներ թէ իրենց պարտաւորութիւնը ժողովրդաց հայր եւ պաշտպան լինիլն էր եւ ոչ հարստահարել, թէ աստուած համար պիտի պահանջէր այն անիրաւութեանց, որ հաւասար օտարին՝ կը գործադրէին զանազան գաւառներու մէջ: Եւ իշխանք, որ զաստուած շատ հեռու կը գտնէին իրենց անզգամութեանց սանձ դնելու համար՝ Թեոդորոսի երկիւղէն արդարութեամբ կը կառավարէին իրենց վիճակը: Ճշմարիտ հայրենասիրութիւն, որ ոչ զազգը շողոթորթելու եւ ոչ նախատելու մէջն է՝ կը զգար իւր արդար սիրտը եւ ուղիղ խորհրդածութիւնը. ինք կը տեսներ եւ լաւ կը հասկնար թէ հայ ազգին թշուառութեան պատճառն զօրաւոր ազգային կառավարութիւն մը չլինելն էր եւ նախարարաց անկոպար իշխանութենէն առաջ կ'ուզար, որով երկրին մէջ կատարեալ անիշխանութիւն եւ փոքրիկ բռնաւորներ կը տիրէին, ստրուկք եւ խաղալիք օտարին: Եթէ ինք, որ հանճարի մարդ էր կը ջանար համոզել նախարարաց երեւելիքը միանալ դաշնակցութիւն մը կազմել օտարին բռնութենէն ազատելու հայրենիքը եւ արդարութիւնը թագաւորեցնելու համար, կային այնպիսի թուլամորթ կամ չարակամ կամ կարճատես մարդիկ, որ փախուստ կ'ուտային այդ միաբանութեան կապէն, երկրին տարածութիւնը, լեռներու անջրպետքը ցցնելով, որոնց Թեոդորոս կը հարցներ իրաւամբ թէ